

Մեֆյան տիրապետության շրջանում Արևելյան Հայաստանում գործող վարչաքաղաքական համակարգի և Կովկասում ձևավորված վարչական միավորների ուսումնասիրման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի Միրզա Մամի'այի «Թագքիրաթ ալ-մուլուք» աշխատությունը, որի բնագիրը թարգմանաբար ներկայացվում է սույն հրատարակությամբ:

### **Իրանի պատմագրությունը**

Արաբների կողմից Սասանյան պետության նվաճումը 632-651 թթ. ու նրա բնակչության հետագա մահմեդականացումը Իրանի պատմության բեկումնային ժամանակահատվածներից էր, երբ ընդհատվում է միջին պարսկերեն գրավոր գրականության, այդ թվում նաև պատմագրության բնականոն զարգացումը: Օմայյան խալիֆ Աբդ ալ-Մալիքի իշխանության շրջանում (685-705 թթ.) արաբերենը դառնում է ողջ խալիֆայության պաշտոնական լեզուն՝ դուրս մղելով նրա կազմի մեջ ընդգրկված երկրների տեղական լեզուների գործածությունը գրավոր խոսքում: Երկդարյա ընդմիջումից հետո նոր պարսկերեն գրականությունը հանդես է գալիս միայն IX դարից և կապված է Իրանի մշակութային զարթոնքի հետ<sup>3</sup>:

Արաբերեն գրով վաղ նոր պարսկերեն լեզուն հանդես է գալիս IX դարի կեսերից բանաստեղծական երկերում ու իրանական էպոսի՝ «Շահնամեի» վաղ նմուշներում: Ֆիրդուսին իր անմահ երկը գրում է՝ հենվելով Սասանյան «Խվաթայ նամակ» կոչվող տարեգրության հին արձակ հատվածների վրա, որոնք հավաքվել

---

<sup>3</sup> Ludwig Paul, Persian language: Early New Persian, Encyclopedia Iranica, available online: <http://www.iranicaonline.org/articles/persian-language-1-early-new-persian> (visited on August 24 2019).

էին Թուսի Սամանյան տիրակալ Աբու Մանսուր բ. Աբդ ալ-Ռազզադի իշխանության օրոք, և ներառելով հատվածներ նաև Դադիդի կողմից ավելի վաղ գրված «Շահնամեից»<sup>4</sup>:

X դարի առաջին կեսի արձակ պարսկերեն աշխատությունները հիմնականում կամ թարգմանություններ էին արաբերեն երկերից կամ հիմնվում էին արաբական աղբյուրների վրա: Այդպիսին են Բալ'ամիի պատմագրական և անանուն հեղինակի պատմաաշխարհագրական «Հուդուդ ալ-ալամ» երկերը:

Պարսկերեն առաջին ինքնուրույն աշխատություններից էր 982թ. Սամանյան պետության մեջ մտնող Գուզգանանի մարզում անհայտ հեղինակի կողմից գրված աշխարհագրական աշխատությունը, որ վերնագրված է «Հուդուդ ալ-ալամ» (Աշխարհի սահմանները)<sup>5</sup>: 60 գլուխներից բաղկացած այս աշխատությունը, հենվելով արաբ հեղինակներ Իսթախրիի, Բալխիի, Մաս'նուդիի և Իբն Հաուկալի հաղորդումների վրա, շարունակում է արաբական նկարագրական աշխարհագրության ավանդույթները և արժեքավոր տեղեկություններով լրացնում ինչպես խալիֆայության, այնպես էլ Հայաստանի ու հարակից տարածքների պատմական աշխարհագրությունը<sup>6</sup>:

Պարսկերեն աշխարհագրական երկերի շարքից է նաև մի փոքր ավելի ուշ՝ XI դարի կեսին, իսմայիլական աղանդին հարող

---

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> حدود العالم من المشرق الى المغرب، بكوشش دكتور منوچهر ستوده، تهران: دانشگاه تهران، 1340.

<sup>6</sup> Աղբյուրի տեղեկությունների քննությունը հայոց պատմության տեսանկյունից տե՛ս Հ. Դ. Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Աղբրեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին, Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, № 5, էջ 73-88:

բանաստեղծ Նասեր Խոսրովի (1003-1088 թթ.) կողմից գրված «Սաֆարնամեն» (Ուղեգրություն): Այս աշխատությունը, չնայած իր փոքր ծավալին, հարուստ է ինքնատիպ ու հետաքրքիր տեղեկություններով այն երկրների ու բնակավայրերի մասին, որոնց հեղինակը այցելել է որպես իսմայիլական քարոզիչ կատարած իր երկարատև ճանապարհորդությունների ժամանակ: «Սաֆարնամեի» բնագիրը հրատարակվել է<sup>7</sup>: Այն մատչելի է նաև անգլերեն ու ռուսերեն թարգմանություններով<sup>8</sup>: Նասեր Խոսրովի ուղեգրության Հայաստանին ու Ատրպատականին վերաբերող մասերը ուսումնասիրել և թարգմանաբար՝ անհրաժեշտ մեկնաբանություններով հրատարակել է Վահան Փափազյանը<sup>9</sup>:

Բալ'ամիի կողմից X դարի կեսերին Թաֆարիի «պատմության» համառոտ խմբագրությունից հետո առաջին պարսկերեն պատմագրական աշխատությունը գրվում է XI դարի կեսին Աբդալ-Հայ Գարդիզիի կողմից և վերնագրված է «Ջեյն ալ-ախբար» (Տեղեկությունների գեղեցկություն): Այս աշխատությունն ընդգրկում է նախասլամական ժամանակներից մինչև 1041 թ. ընկած ժամանակաշրջանի Իրանի և հատկապես Խորասանի պատմությունը<sup>10</sup>:

<sup>7</sup> سفرنامه ناصر خسرو، بکوشش نادر وزین پور، تهران: کتبهای جیبی، 1984.

<sup>8</sup> Насири Хусрау, Сафар-намэ. Книга путешествия. Пер. и вступ. Е. Бертельса, Москва-Ленинград, 1933. Naser-e Khosraw's Book of Travels, edited by Wh. Thakston, Bibliotheca Persica, 1986.

<sup>9</sup> Վ. Փափազյան, Նասեր Խոսրովի «Սաֆար նամեն» Հայաստանի և Ատրպատականի պատմության ու աշխարհագրության սկզբնաղբյուր, Լրաբեր Հասարակական գիտությունների, 3(459), Երևան, 1981, էջ 97-102:

<sup>10</sup> Elton L. Daniel, Historiography: Early Islamic period, Encyclopedia Iranica, Vol. XII, Fasc. 3, pp. 330-336 and Vol. XII, Fasc. 4, pp. 337-349, available

Իրանի XI դարի պատմական առավել արժեքավոր աշխատություններից է Աբու-լ-Ֆազլ Բեյհակիի «Թարիխ-ե ալ-ե Սեբուկ Թեղին» (Սեբուկ Թեղինի տոհմի պատմությունը): Հեղինակը երկար տարիներ աշխատելով Ղազնևյան տիրակալներ Մահմուդի ու Մաս'ուդի արքունիքում՝ իր աշխատությունը գրելիս օգտագործել է պետական փաստաթղթեր և ներդրել հարուստ փաստագրական նյութ: Նրա աշխատությունը ընդգրկում է 1018-1059թթ. ժամանակաշրջանի պատմությունը և բաղկացած է եղել 30 հատորներից, որոնցից մեզ են հասել միայն VII, VIII ու IX հատորներն ամբողջությամբ և VI, X հատորների մի մասը<sup>11</sup>:

Նոր պարսկերենն իր դիրքերն էլ ավելի է ամրապնդում Սելջուկյան պետության ժամանակաշրջանում՝ այդ պետության հետ նաև ընդլայնելով իր գործածության շրջանակները մինչև Փոքր Ասիա և Կովկաս: Այն դառնում է «իսլամական լեզու»՝ իր մեջ ներառելով մեծ թվով փոխառություններ արաբերենից: Հետագայում ևս ընդհուպ մինչև XIX դար նոր պարսկերենի կիրառության սահմանները դուրս էին բուն Իրանի տարածքից և ընդգրկում էին արևմուտքում Ռումի Սելջուկյան սուլթանության և արևելքում Հյուսիսային Հնդկաստանի, Աֆղանստանի ու Պակիստանի շրջանները<sup>12</sup>:

---

online: <http://www.iranicaonline.org/articles/historiography-iii> (last visited on 03.09.2019).

<sup>11</sup> ابو الفضل بيهقى، تاريخ بيهقى، مقدمه، توضیحات و تعلیقات و فهرس از منوچهر دانش بزه، جلد 1، 2، تهران 1376.

<sup>12</sup> Ludwig Paul, Persian language i. Early New Persian. Historical background. Encyclopædia Iranica, online edition (accessed on April 21, 2015): <http://www.iranicaonline.org/articles/persian-language-1-early-new-persian>.

Իրանի Սելջուկյան ժամանակաշրջանի պարսկերեն աղբյուրներից է անհայտ հեղինակի կողմից 1196 թ. գրված հակիրճ «Մուջմալ ալ – թավարիխը» (Պատմությունների համառոտագրությունը), որում պատմության շարադրանքը հասցվում է մինչև 1126 թ.<sup>13</sup>:

Սելջուկյան ժամանակաշրջանի պատմագրական երկերից Անուշիրվան բ. Խալիդ Քաշանիի (մահ. 1138/9 թ.) պատմագրական աշխատությունը կորած է համարվում և մեզ է հասել Իմադ ալ-Դին Քաթեբ Իսֆահանիի արաբերեն խմբագրությամբ, որը գրված է ծաղկուն, դժվարըմբռնելի ոճով: Այս աշխատությունն իր հերթին խմբագրվել է արաբերեն լեզվով Ֆախր ալ-Դին Բունդարիի կողմից և քանի որ այն հրատարակված է «Չոբդաթ ալ-նուրա» վերնագրով, ուստի այս գործն է հիմնականում հղվում պատմագիտական ուսումնասիրություններում<sup>14</sup>:

Սելջուկյան պատմագրության վառ նմուշներից է «Չոբդաթ ալ-թավարիխ ախբար ալ-օմարա վա-լ-մուլթ ալ-Սալջուղիա» վերնագիրը կրող ձեռագրի բնագիրը, որը Աբբաս Էդրալի խմբագրությամբ հրատարակվել է «Ախբար ալ-դաուլա ալ-Սալջուղիա» (Տեղեկություններ Սելջուկյան պետության մասին) վերնագրով և վերագրվում է Սադր ալ-Դին Աբու-լ-Հասան բ. Ալի բ. Նասեր Հուսեյնիին:

Բացի վերը նշված Քաշանիի գործից, Սելջուկյան պատմագրության մնացած բոլոր մյուս աշխատությունները ծագում են

---

<sup>13</sup> Elton L. Daniel, *Historiography: Early Islamic period.*

<sup>14</sup> Նույն տեղում:

Ջահիր ալ-Դին Նիշապուրիի «Սելջուկ-նամեից», որը հայտնի միայն մեկ դեռևս չհրատարակված ձեռագրով<sup>15</sup>:

Նաջմ ալ-Դին Ռավենդի, որը ստացել էր իր ժամանակի համար լավագույն կրթություն, մասնագիտությամբ եղել գրագիր ու կազմարար, որոշ ժամանակ ծառայելով Իրաքի սուլթան Թողրուլ Գ-ին, 1202թ. գրում է իր պատմագրական աշխատությունը, որ կոչվում է «Ռահաթ ալ-սուդուր վա այաթ ալ-սուրուր» (Սրտերի հանդարտեցում և ուրախության հրաշք)<sup>16</sup>: Հեղինակն իր երկում ընդգրկելով Իրանի Սելջուկյան ժամանակաշրջանը մինչև 1199թ.՝ անդրադառնում է ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական պատմության հարցերին:

Այս ժամանակաշրջանի կարևոր աղբյուրներից է Սելջուկյան տիրակալներ Ալպ-Արսլանի ու Մելիք շահի վեզիր Նիզամ ալ-մուլքին վերագրվող «Միասաթ-նամե» աշխատությունը<sup>17</sup>, որը բովանդակում է պետության կառավարմանը, զանազան վարչությունների ու պաշտոնյաների գործունեությանը վերաբերող տեղեկություններ ու հանձնարարականներ: Այն թարգմանվել է ֆրանսերեն, անգլերեն ու ռուսերեն<sup>18</sup> լեզուներով:

Սոցիալ-կենցաղային բնույթի առատ նյութ է պարունակում Նիզամի Արուզի Սամարղանդիի «Չահար մաղալե» (չորս հոդված) աշխատությունը մարդկային չորս խավերի (վեզիրներ,

<sup>15</sup> Elton L. Daniel, *Historiography: Early Islamic period.*

<sup>16</sup> محمد علی بن سلیمان الراوندی، راحة لاسدور و آية السرور، بسعی و تصحیح محمد اقبال، تهران، 1364.

<sup>17</sup> خواجه نظام الملک، سیر الملوک: سیاست نامه، باہتمام ہیوبرت دارک، انتشارات علمی و فرهنگی.

انتشارات بنگاه ترجمه و نشر کتاب، چاپ دوم، تهران 1347.

<sup>18</sup> Сиасет-намэ книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька, перевод, введение и примечания Б. Н. Заходера, М., Л., 1949.

բանաստեղծներ, աստղագուշակներ և բժիշկներ) նշանավոր ներկայացուցիչների մասին<sup>19</sup>:

Մինհաջ ալ-Դին Օսման Ջուզջանին, որ եղել է Գուրյան սուլթանների պաշտոնյաներից, մոնղոլների արշավանքի ժամանակ հեռանում է Հնդկաստան, որտեղ էլ մնում է մինչև իր մահը: Այստեղ էլ, 1260 թ. նա ավարտում է իր կարճ ընդհանուր տիպի պատմությունը, որն ընծայել է Հինդուստանի Նասեր ալ-Դին Մահմուդ շահին՝ անվանելով այն «Թաբադաթ-ե Նասերի» (Նասերի կարգերը)<sup>20</sup>: Այս հեղինակը պատկերում է մոնղոլական արշավանքները առանց բողոքելու նրանց սարսափելի հետևանքները:

Իրանի մոնղոլական ժամանակաշրջանում (1220-1336 թթ.) պարսկալեզու պատմագրությունը վերելք է ապրում: Պատմագրության մեջ տիրապետող է դառնում պարսկերենը, իսկ արաբերենը գրեթե դուրս է մղվում: Մոնղոլ տիրակալները խրախուսում էին իրանցի պատմագիրներին գրել իրենց հաղթանակներն ու գործերը փառաբանող երկեր:

Մոնղոլների պետական ապարատում ծառայության մեջ զտնվող պատմագիրների շարքը սկսում է Ալա ալ-Դին Աթա Մալիք իբն Մուհամմեդ Ջուվեյնին (1226-1283թթ.)՝ ծագումով պարսից ազնվականական տոհմից: Նա իր պատմագրական երկը, որ կոչվում է «Թարիխ-ե Ջահանգոշա» (Աշխարհի նվաճման պատմություն) ավարտել է 1260 թ.<sup>21</sup>: Այն բաղկացած է երեք

<sup>19</sup> نظامی عروضی، چهار مقاله، باهتمام محمد معین، تصحیح محمد قزوینی، تهران: انتشارات جامی، 1996.

<sup>20</sup> منهاج سراج جوزجانی، طبقات ناصری، جلد اول، دوم، تصحیح، مقابله و تحشیه عبدالحی حبیبی، تهران، اساطیر، 1389.

<sup>21</sup> تاریخ جهانگشای جوینی، تصحیح محمد قزوینی، تهران، 1911.

հատորներից, որոնցից առաջինը բովանդակում է Մոնղոլական կայսրության պատմությունը՝ Չինգիզ խանի առաջին արշավանքներից մինչև Գույուկ խանի մահը, երկրորդը՝ Խորեզմշահերի պետության պատմությունը, երրորդը՝ Հուլավու խանի արշավանքը Իրան, նաև Ալամուտի համայնիլական պետության պատմությունը: Չնայած իր ընդհանուր մոնղոլական ուղղվածությանը, երկուսն լրության չեն մատնված մոնղոլական նվաճման բացասական կողմերը:

Պարսկալեզու խոշորագույն պատմագիրներից է Ղազան և Օլջայթու խաների վեզիր Ռաշիդ ալ-Դին Ֆազլուլլահ բ. Աբու-լ-Խեյր Ալի Համադանին (1247-1318): Ղազան խանի պատվերով 1300-1310թթ. նրա գրած ընդարձակ «Ջամի' ալ-թավարիխ» (Տարեգրությունների ժողովածուն) պատմական ընդհանուր տիպի աշխատությունը ընդգրկում է ոչ միայն մահմեդական երկրների, այլև հեղինակին հայտնի բոլոր ժողովուրդներինը՝ սկսած արևմուտքում «Ֆրանկների» երկրից մինչև արևելքում Չինաստան: Իր աշխատությունն առավել իրական ու հավաստի դարձնելու նպատակով հեղինակը ներգրավել է աշխատակիցներ, որոնք լավատեղյակ են եղել առանձին ժողովուրդների լեզվին ու պատմությանը: Այս պատմագրական երկը առավել լավ ուսումնասիրված պարսկական աղբյուրներից է, որը թարգմանվել է նաև ռուսերեն<sup>22</sup>:

---

Այս պատմագրության անգլերեն թարգմանությունը տե՛ս The history of the world conqueror by 'Ala-ad-Din 'Ata-Malik Juvaini. Translated from the text of Mirza Muhammad Qazvini by J. Boyle, vol. 1, 2, Cambridge Massachusetts: Harvard University Press, 1958.

<sup>22</sup> Рашид ад-дин, Фазлуллах, Джами ат-таварих (Сборник летописей), т. 1, кн. 1, 2, т. 2, 3, М., Л.: Изд. АН СССР, 1952, 1960, 1946.

Աշխատության առաջին հատորը, որը Ղազան խանի պատվին կոչվել է «Թարիխ-ե Ղազանի», ներառում է մոնղոլաթյուրքական ցեղերի, Չինգիզ խանի ու նրա հաջորդների, մոնղոլական պետությունից առանձնացած ուլուսների պատմությունը<sup>23</sup>: Երկրորդ հատորի մեջ են մտել ոչ մահմեդական երկրների՝ Չինաստանի, հրեաների, «ֆրանկների», Հռոմի կայսրերի ու Հնդկաստանի պետության պատմությունը: Հ. Փափազյանը ուսումնասիրել է «Ջամի՝ ալ-թավարիիխի» Կիլիկյան Հայաստանին վերաբերող հատվածը և ներկայացրել այն հողվածով<sup>24</sup>: Մոնղոլական ժամանակաշրջանի կարևոր սկզբնաղբյուրներից է նաև Ռաշիդ ալ-Դինի «Նամակագրությունը», որը ևս թարգմանվել է ռուսերեն<sup>25</sup>:

Շահաբ ալ-Դին 'Աբդուլլահ իբն Ֆազլուլլահ Շիրազին, որն առավել հայտնի է իր «Վասսաֆ ալ-հազրաթ» ծածկանունով, ևս մոնղոլ տիրակալներին գովերգող պատմագիրներից է, որը ծառայելիս է եղել ֆինանսական վարչությունում: Նրա ծավալուն պատմական աշխատությունը կրում է հետևյալ վերնագիրը՝ «Թազզիյաթ ալ-ամսար վա թազզիյաթ ալ-ա'սար» (Շրջանների բաժանումն ու դարերի բաշխումը), բայց ավելի շատ հայտնի է «Թարիխ-ե Վասսաֆ» անվամբ<sup>26</sup>: Աշխատության առաջին չորս

<sup>23</sup> Այս աշխատության քննական բնագիրը տե՛ս Рашид ад-Дин, Джами ат-таварих, (пред. А. А. Али-заде), т. I-III, Москва, 1957-1968.

<sup>24</sup> Հ. Փափազյան, Ռաշիդ-եղ-Դինը Կիլիկյան Հայաստանի մասին, ՊԲՀ, հ. 2 (81), 1978, էջ 129-139:

<sup>25</sup> رشيد الدين فضل الله، مكاتبات رشيدى، لاهور، 1364. Рашид ад-дин, Фазлуллах, Переписка, М. Наука, 1971.

<sup>26</sup> Մաշտոցյան Սատենադարանում պահվում է Վասսաֆի պատմության առաջին հատորի XIX դարի մի ձեռագիր ընդօրինակություն (ՄՄ, արաբատառ ֆոնդ, ձեռ. 15):

մասերը գրվել են ու ներկայացվել Օլջայթու խանին 1312 թ., իսկ հինգերորդ մասն ավարտվել է 1328 թ.: Աշխատությունը գրվել է որպես Ջուվեյնիի պատմության շարունակություն, ուստի ընդգրկում է 1257-1323 թթ. ժամանակահատվածի պատմությունը: Այն հարուստ է հիշյալ ժամանակաշրջանի Իրանի թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական պատմությանը վերաբերող արժեքավոր տվյալներով, որոնց օգտագործումը սակայն դժվարանում է հեղինակի շարադրանքի խիստ ծանր ու խրթին ոճի պատճառով:

Մոնղոլ տիրակալներին գովերգող հայտնի պատմագիրների շարքը լրացնում է իրանցի ազնվականների տոհմից սերող Համդալլահ Մուսթովֆի Ղազվինին (ծնվ. 1281թ.): Նա իր պատմական «Թարիխ-ե գոգիդե» (Ընտիր պատմություն) աշխատությունն ավարտում է 1330թ.: Այն ընդհանուր տիպի պատմություն է, որի XII գլխի IV բաժինն ընդգրկում է Իրանի մոնղոլական ժամանակաշրջանի համառոտ պատմությունը մինչև 1329թ., իսկ VI գլխում մանրամասն նկարագրվում է հեղինակի ծննդավայր Ղազվինը: Հետագայում հեղինակը շարունակում է իր պատմության շարադրանքը՝ հասցնելով մինչև 1344 թ.: Նրա որդին՝ Ջեյնալ-Դին Մուսթովֆի Ղազվինին իր հերթին պատմական դեպքերի շարադրանքը շարունակում է հասցնելով մինչև 1392 թ.:

1335 թ. Համդալլահ Ղազվինին ավարտում է իր չափածո տարեգրություն - պոեմը կոչված «Ջաֆարնամե» (Գիրք Հաղթության)՝ բաղկացած 75000 բեյթից, որը հեղինակը գրել էր իբրև Ֆիրդուսու «Շահնամեի» շարունակություն: Այս երկում դեպքերի շարադրանքը հասցվում է մինչև 1331/2 թ.:

Պատմական բարձր արժեք ունի Համդալլահ Ղազվինիի կողմից 1340թ. գրված աշխարհագրական «Նուզհաթ ալ-դուլուբ» (Սրտերի մաքրություն) աշխատության III մասը, որտեղ հեղինակը տնտեսական բնույթի առատ տվյալներ է հաղորդում իրեն ժամանակակից Իրանի մասին<sup>27</sup>: Հայաստանի բնակավայրերի մասին Համդալլահ Ղազվինիի «Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության հաղորդումների ուսումնասիրություն է կատարել Էլինա Ղազարյանը<sup>28</sup>:

Թիմուրյան պատմագրությունը ևս զարգանում է նույն պալատական- ներքողական ոճի մեջ որպիսին մոնղոլական շրջանի պարսկական պատմագրությունն էր:

XV դարի պատմագիրների շարքում նախ և առաջ հարկ է նշել Լենգ Թեմուրի պալատական պատմագիրներ Նիզամ ալ-Դին Շամիին և Շարաֆ ալ-Դին Եզդիին, որոնք երկուսն էլ իրենց պատմական աշխատությունները վերնագրել են «Ջաֆարնամե»: Թե՛ Շամիի երկը (գրվել է 1404թ.) և թե՛ Եզդիինը (1424թ.) շարադրված են մեզ չհասած պաշտոնական սկզբնաղբյուրների վրա և ներկայացնում են Թեմուրին ու նրա գործերը իդեալական կերպով, առանց բացասական կողմերի: Շամիի աշխատությունը

---

<sup>27</sup> نزهة القلوب، تالیف حمدالله بن ابی بکر بن محمد بن نصر مستوفی قزوینی، با مقابله وحواشی و تعلیقات و فهارس محمد دبیر سیاقی، تهران، 1336.

<sup>28</sup> Ղազարյան Է., Հայկական բնակավայրերն ըստ Համդալլահ Ղազվինիի «Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության, «Հայաստանը և Արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը». Գ, Հանրապետական գիտաժողով նվիրված Պ. Չոբանյանի ծննդյան 70 ամյակին, Ջեկուցումներ ու զեկուցումների դրույթներ, Երևան, 2018, էջ 162-178:

գրված է պարզ ու հասկանալի ոճով<sup>29</sup>, իսկ Եզդիինը՝ խրթին է ու ավելի ներբողական<sup>30</sup>:

Թիմուրյան պատմագրության առավել նշանավոր ներկայացուցիչը Հաֆեզ-ե Աբրուն է (մահ. 1430թ.): Նա ծառայել է սկզբում Լենգ Թեմուրին, ապա նրա որդուն՝ Շահրոխին: Վերջինիս արքունիքում էլ գրում է իր պատմական ու աշխարհագրական երկերը:

Հաֆեզ-ե Աբրուն մի շարք պատմագրական երկերի հեղինակ է, որոնք են՝

- Ռաշիդ ալ-Դինի «Զամի ալ-Թավարիխի շարունակությունը» (Զեյլ-ե Զամի ալ-Թավարիխ), որն ընդգրկում է 1304-1335 թթ. Օլջայթու և Աբու Սաիդ Իլխանների իշխանության ժամանակաշրջանը,

- Շամիի «Զաֆարնամեի շարունակությունը» (Զեյլ-ե Զաֆարնամե-ե Շամի), որը բովանդակում է Լենգ Թեմուրի կյանքի վերջին տարվա 1404-5 թթ. պատմությունը,

- «Թարիխ-ե Հաֆեզ-ե Աբրու» պատմաաշխարհագրական երկը, որն ավելի շատ հայտնի է «Ջողրաֆիա» անվամբ և հեղինակը սկսել է գրել Շահրոխի պատվերով 1414 թ.՝ առաջնորդվելով արաբական աշխարհագրության մոդելով<sup>31</sup>: Նրա այս երկում բավականին ընդարձակ տեղ է հատկացված Ֆարս, Խորասան ու

---

<sup>29</sup> Այս երկի բնագիրը և նրա ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս Sami, Nizamuddin, Histoire des conquetes de Tamerlan intitulee Zafarnama, t. I, II, Praha, 1937, 1956. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում առկա է այս աշխատության XVII դարի մի ամբողջական ընդօրինակություն (ՄՄ, արաբատառ ֆոնդ, ձեռ. 286):

<sup>30</sup> شرف الدين يزدي، ظفرنامه تصحيح و تحقيق عبد الحسين نوابي، تهران، 1387.

<sup>31</sup> جغرافياى حافظ ابرو، تصحيح سى سجادی، جلد 1، 2، تهران: ميراث مکتوب، 1375.

Քերման նահանգներին, որոնց նկարագրության մեջ ծավալուն պատմական ակնարկ կա:

- «Մաջմու'ե-ե Հաֆեզ-ե Աբրուն» (Հաֆեզ-ե Աբրունի ժողովածու) կոմպիլյատիվ բնույթի տիեզերական պատմություն է, որը գրելով 1417-1418 թթ. Շահրոխի պատվերով հեղինակը ներառելով Թաբարիի, Ռաշիդ ալ-Դինի ու Շամիի հատվածները՝ շարունակում է նրանց պատմությունները:

- Մյուս ընդարձակ պատմական աշխատությունը, որը հայտնի է «Մաջմա' ալ-թավարիխ» (Տարեգրությունների ժողովածու) վերնագրով, և 1426 թ. հեղինակը գրել է Շահրոխի որդի Բայսունդուրի համար, բաղկացած է չորս հատորներից: Այդ երկի չորրորդ մասը, որը վերնագրված է «Զուբդաթ ալ-թավարիխ-ե Բայսունդուրի» (Բայսունդուրի տարեգրությունների ժողովածու), աղբյուրագիտական տեսանկյունից ամենաարժեքավորն է, որն աչքի է ընկնում իր հաղորդումների ճշգրտությամբ ու հակիրճ շարադրանքով<sup>32</sup>:

Աբդ ալ-Ռազզադ Սամարղանդիի (1413-1482թթ.) երկհատորյա պատմագրական երկը վերնագրված է «Մաթլա' ալ-սա'դեյն վա մաջմա' ալ-բահրեյն» (Երկու երջանիկ աստղերի ծագումն ու երկու ծովերի միախառնումը): Մինչև 1426թ. դեպքերի նկարագրությունը աշխատանքը կոմպիլյատիվ բնույթի է՝ հիմնված Հաֆեզ-ե Աբրունի «Մաջմա' ալ-թավարիխի» վրա, մնացած մասում՝ (մինչև 1470թ.) հեղինակն ինքնուրույն է շարադրում իր

---

<sup>32</sup> M. Subtelny and Ch. Mellville, Hafez-e Abru, Encyclopedia Iranica, vol. XI, Fasc. 5, pp. 507-509, available online (last visited 27.08.2019): <http://www.iranicaonline.org/articles/hafez-e-abru>

պատմությունը: Երկում առատ են տնտեսական բնույթի տվյալները:

XV դարի նշանավոր պատմագիրներից է Միրխունդ անվամբ հայտնի Մուհամմեդ իբն Խավանդշահը (1433-1498թթ.), որը ծառայելով Հերաթում գտնվող Թիմուրյան պալատում, գրել է 7 հատորյա ընդհանուր տիպի պատմություն «Ռուուզաթ ալ-Սաֆա» (Մաքրության այգի) վերնագրով: Վերջինիս միայն VI և VII հատորներն են վերաբերում XV դարի երկրորդ կեսի պատմությանը<sup>33</sup>: Միրխունդի պատմությունն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև Թիմուրյան Սուլթան Հուսեյն Բայքարայի իշխանությունն (1470-1506 թթ.) ընկած շրջանի պատմությունը: Սկզբի հատորները կոմպիլյատիվ բնույթ ունեն և հիմնված են արաբական ու պարսկական տարբեր աղբյուրների վրա, որոնց մի մասը չի պահպանվել, իսկ վերջին հատորի հեղինակն է ըստ երևույթին նրա թոռ Խանդամիրը<sup>34</sup>, քանի որ այն ընդգրկում է նաև նրա մահվանը հաջորդած դեպքերի շարադրանքը: «Ռուուզաթ ալ-սաֆան» դեռևս XIX դարում հրատարակվել էր անգլերեն թարգմանությամբ<sup>35</sup>, թեև իր հաղորդած տեղեկությունների հավաստիությամբ ու ճշգրտությամբ զիջում է Հաֆեզ-ե Աբրուին ու Սամարղանդիին:

Հաֆեզ-ե Աբրուի, Միրխունդի ու Խանդամիրի լայնածավալ աշխատությունները շուտով տարածվում են ողջ իսլամական

<sup>33</sup> روضة الصفا، تالیف محمد بن خاوند شاه بلخی، تهذیب و تلخیص عباس زریاب، تهران 1358.

<sup>34</sup> M. Szuppe, *Historiography: Timurid period*, *Encyclopedia Iranica*, Vol. XII, Fasc. 4, pp. 356-363, available online (last visited 27.082019):

<http://www.iranicaonline.org/articles/historiography-v>

<sup>35</sup> *History of the Early kings of Persia*, translated from the Persian of Mirkhond with notes by David Shea, London, 1832.

աշխարհում և օրինակ ծառայում հետագա դարերի պատմագիրների համար<sup>36</sup>:

Հայկական բարձրավանդակն ու Այսրկովկասի շրջաններն իր սահմաններում ընդգրկած Կարա Կոյունլու ու Ակ Կոյունլու Թուրքմեն տիրակալների ստեղծած պետության պատմության աղբյուրներն ավելի սակավաթիվ են: Դրանց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Ֆազլալլահ Ռուզբեհան Ամինի Խունջիի «Թարիխ-ե ալամ-առա-ե ամինի» աշխատությունը, որը բովանդակում է Ակ Կոյունլուների պետության պատմությունը մինչև 1488 թ.<sup>37</sup>: Հեղինակը լինելով Ակ Կոյունլու տիրակալների պալատական պաշտոնյան՝ Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի գահակալումից հետո ջանալով խուսափել կրոնական հետապնդումներից, ապաստան է գտնում Մուհամմեդ խան Շեյբանիի պալատում:

Սեֆյան դարաշրջանում պարսկալեզու պատմագրությունը շարունակում է զարգանալ: Խիստ մեծ է այս շրջանի պատմագիրների թիվը, որոնց որոշ մասը գտնվելով պետական ծառայության մեջ, հնարավորություն ուներ օգտվելու պետական փաստաթղթերից ու հավաստի աղբյուրներից:

Սեֆյան թագավորական տան հիմնադիր Իսմայիլ Ա-ի գահակալության մինչև 1512 թ. ընկած ժամանակահատվածի տարեգրությունն է ընդգրկում XVI դարի բանաստեղծ ու պատմաբան

<sup>36</sup>M. Szuppe, *Historiography: Timurid period.*

<sup>37</sup> تاریخ عالم آرای امینی "شرح حکمرانی سلاطین آق قویونلو و ظهرو صفویان" تالیف فضل الله روزبهان خنجی اصفهانی، تصحیح محمدعشیق، تهران، میراث مکتوب، 1382.

Քյամալ ալ-Դին Բեննայիին վերագրվող «Շահանշահ-նամեն» (Գիրք արքայից արքայի)<sup>38</sup>:

Ամիր Սադր ալ-Դին Սուլթան Իբրահիմ Ամինիի «Ֆութուհաթ-ե շահի» (Շահական հաղթանակները) կամ «Ֆութուհաթ-ե Ամինի» (Ամինիի հաղթանակները) աշխատությունը ևս նվիրված է շահ Իսմայիլ Ա-ի ժամանակաշրջանի դեպքերի նկարագրությանը: Հեղինակը նախապես եղել է Սուլթան Հուսեյն Բայթարայի պաշտոնյաներից, իսկ 1519 թվականից ծառայել Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի պալատում: Իր երկհատորյա պատմությունը Ամինին սկսում է Ադամից և հասցնում մինչև 1512 թ., ընդ որում երկրորդ հատորն ամբողջովին նվիրված է շահ Իսմայիլ Ա-ի գահակալման առաջին 12 տարիների պատմությանը<sup>39</sup>:

Պատմական էպոս է անվանում հետազոտող Ասդար Մոնթազեր Սահերն իր աշխատասիրությամբ հրատարակված անանուն հեղինակի «Ալամ առա-ե շահ Իսմայիլ» (Շահ Իսմայիլի աշխարհակալությունը) անվամբ հայտնի աշխատությունը<sup>40</sup>: Այն բովանդակում է Սեֆյան պետության հիմնադրի պատմությունը՝ համեմված տարաբնույթ ավանդապատումներով:

Առաջին Սեֆյան շահի ժամանակակիցն էր նշանավոր պատմագիր Միրխոնդի թորը՝ Գիյաս ալ-Դին իբն Հուսամ ալ-Դին ալ-Հուսեյնին, որն ավելի շատ հայտնի էր Խանդամիր ծածկանունով (1475-1535թթ.): Նա իր կյանքի մեծ մասը անց է կացրել

<sup>38</sup> Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXвв., Ленинград, изд. Ленинградского гос. университетa им. А. А. Жданова, 1949, с. 20.

<sup>39</sup> 29. ص. 1380. تهران، مأخذ، منابع و شناخت منابع و عصر صفوی و شناخت منابع و مأخذ، تهران، 1380. ص.

<sup>40</sup> عالم آرای شاه اسماعیل، با مقدمه و تصحیح و تعلیق اصغر منتظر صاحب، تهران: انتشارات علمی و فرهنگی، 1384. ص. 11.

Հերաթում, որտեղ Թիմուրյան սուլթան Բադի ալ-Չամանի վեզիր, նշանավոր բանաստեղծ Միր Ալիշեր Նավոյիի հովանավորությամբ 1500թ. գրում է պատմական կարճ կոմպիլյատիվ աշխատությունը, որ կոչվում է «Խոլասաթ ալ-Ախբար» (Տեղեկությունների համառոտագրություն); իսկ 1524թ. իր ընդարձակ «Հաբիբ ալ-սիյար» (կենսագրությունների ընկեր), որն այդպես էր կոչվել նրա նոր հովանավորի՝ Խոջա Հաբիբուլլահ Սավեջիի պատվին: Այս աշխատությունը բաղկացած է երեք հատորներից, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում է չորս մասի<sup>41</sup>: Չնայած իր խրթին ոճին նրա այս աշխատությունն աչքի է ընկնում ճշգրտությամբ ու բովանդակած փաստագրական նյութերի առատությամբ: Հատկապես արժեքավոր են նրա այն մասերը, որոնք ընդգրկում են Թիմուրյան սուլթան Հուսեյնի ու Բամայիլ Ա-ի կառավարման ժամանակաշրջանը: Թեև առանձին դեպքերում հեղինակը հանդես է բերում կողմնակալ վերաբերմունք, սակայն ընդհանուր առմամբ նրա «Հաբիբ ալ-սիյար» աշխատությունը բարձրարժեք աղբյուր է համարվում իր ժամանակի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության որոշ հարցերի լուսաբանման համար<sup>42</sup>:

Միր Յահիա Ղազվինին (1481-1552/3թթ.) գրել է «Լուբբ ալ-թավարիխ» (Պատմությունների միջուկ) կոչված հակիրճ աշխատությունը՝ նվիրված շահ Թահմասպ Ա-ի որդի Բահրամ Միրզային: Այն բաղկացած է 4 մասերից, որոնց շարադրանքը խիստ ճշգրիտ է և հազեցած իրադարձությունների մասին տվյալներով,

<sup>41</sup> Մաշտոցյան Մատենադարանում առկա է այս աշխատության առաջին հատորի XVII դարի մի ընդօրինակություն (ՄՄ, արաբատառ ձեռ. 558):

<sup>42</sup> П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 21:

իսկ լեզուն՝ պարզ: Դեպքերի շարադրանքը հասցվում է մինչև 1542թ.<sup>43</sup>:

Խուրշահ իբն Ղուբադ ավ-Հուսեյնին (մահ. 1565թ.) ծագումով պարսիկ, երկար ժամանակ ապրել է Հնդկաստանում՝ ծառայելով Նիզամշահերի արքունիքում: Որպես դեսպան 1546 թ. ուղարկվում է Իրան, որտեղ մնալով բավականին երկար ժամանակ, մասնակցում է Շահ Թահմասպ Ա-ի Հարավ-կովկասյան արշավանքներին: Նա գրել է ընդհանուր պատմություն՝ վերնագրելով այն «Թարիխ-ե իլչի-ե Նիզամշահ» (Նիզամշահի դեսպանի պատմությունը): Այս աշխատության VI մասը նվիրված է թուրքմենական Ակ Կոյունլու և Կարա-կոյունլու իշխանությունների, առաջին երկու Սեֆյան շահերի ու Օսմանյան սուլթանների պատմությանը<sup>44</sup>:

Իրանի և Թուրքիայի սահմանակից շրջանների XVI դարի առաջին կեսի պատմությանը վերաբերող արժեքավոր տվյալներ է բովանդակում շահ Թահմասպ Ա-ի և Օսմանյան սուլթանի դեսպանների զրույցի արձանագրությունը՝ ոչ ճշգրիտ կերպով վերնագրված «Թեզքերե-ե շահ Թահմասպ» (Շահ Թահմասպի հիշատակարանը)<sup>45</sup>:

Ծագումով թուրքական ռումլու ցեղից էր Հասան Բեկ Ռումլուն (ծնվ. 1531 թ.), որը 10 տարեկանից դաստիարակվել էր շահ Թահմասպ Ա-ի պալատում: Նա գրել է 12 հատորյա «Ահսան ավ – Թավարիխ» (Պատմություններից լավագույնը) պատմությունը,

<sup>43</sup>П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 21:

<sup>44</sup>Նույն տեղում, էջ 25:

<sup>45</sup>Նույն տեղում, էջ 26: St' u այն հրատարակված تذکره شاه طهماسب شرح وقایع و احوالات زندگانی شاه طهماسب صفوی بقلم خودش، برلین، چاپخانه کاوناتی، 1343.

որից պահպանվել են միայն XI և XII հատորները<sup>46</sup>: XII հատորը բովանդակում է Սեֆյան առաջին երեք շահերի ժամանակաշրջանի պատմությունը մինչև 1577 թ.: Աշխատության յուրաքանչյուր տարվա շարադրանքում առկա են տվյալներ նշանավոր մարդկանց, աստվածաբանների ու բանաստեղծների մասին, որոնք մահացել են այդ տարի: Այս աշխատությունը համարվում է շահ Թահմասպ Ա-ի և շահ Իսմայիլ Բ-ի ժամանակաշրջանի լավագույն սկզբնաղբյուրներից մեկը<sup>47</sup>:

Իրան ներգաղթած քրդական ռուզեքի ցեղի առաջնորդի ընտանիքից է սերել Շարաֆ Խան Բիթլիսին, որը ծնվել է 1543 թ. Կումի մոտ գտնվող Քերեհրուդ վայրում: 9 տարեկան հասակից նա դաստիարակվել է շահ Թահմասպ Ա-ի պալատում: Վարել է Շիրվանի կառավարչի պաշտոնը: Բայց հետագայում հեռանում է Թուրքիա՝ ստանձնելով իր ժառանգական տիրույթ Բիթլիսի վիլայեթի կառավարչի պաշտոնը: 1596թ. Շարաֆ Խան Բիթլիսին ավարտում է իր «Շարաֆնամե» աշխատությունը, որտեղ ընդարձակ տեղ է հատկացված քրդական ցեղերի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև իր օրերը: «Շարաֆնամեում» մանրամասն շարադրվում են Իրանում XVI դարում զարգացող իրադարձությունները անկողմնակալ կերպով, որը բարձրացնում է աշխատության պատմագիտական արժեք<sup>48</sup>: Հատկապես բարձր է այս աղբյուրի արժեքը Արևմտյան Հայաստանի XVI դարի

<sup>46</sup> A Chronicle of the Early Safawis being the Ahsan u't- Tawarikh of Hasan-i Rumlu, vol. II, Translated by C.N. Seddon, Oriental Institute Baroda, 1934.

<sup>47</sup> И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 29:

<sup>48</sup> Մատենադարանում պահվում է այդ աշխատության XIX դարի մեկ ամբողջական ձեռագիր (ՄՄ, արաբատառ ֆոնդ, ձեռ. 1799):

սոցիալ-տնտեսական պատմության համար<sup>49</sup>: Այս աշխատությունն ունեցել է մի քանի հրատարակություն, թարգմանվել ռուսերեն<sup>50</sup>:

Մեֆյան պատմագրության խոշորագույն ներկայացուցիչը Իսքանդար Բեկ Թորքեմանն է (1560/1-1633/4թթ.), որն ավելի հայտնի է Մունշի (պարսկ. քարտուղար) անվամբ: Ստանալով լավ կրթություն՝ Մունշին 24-25 տարեկան հասակում ծառայության է անցնում շահ Մուհամմեդ Խուդաբանդեի հեծյալ ղուլամների գնդում: 1592/3թ. նա դառնում է բարձրագույն դիվանի քարտուղարներից մեկը՝ գտնվելով է՞թեմադ ալ-դովլեի անմիջական ենթակայության տակ: Վերջինիս հովանավորությամբ էլ նա կարողացել է օգտվել պետական փաստաթղթերից: Լինելով ժամանակաշրջանի ղեկավարներից շատերի ականատեսն ու մասնակիցը՝ Մունշին գրում է շահ Աբբաս Ա-ի պատմությունը, որը վերնագրում է «Թարիխ-ե ալամ առայե Աբբասի» (Աշխարհը զարդարող Աբբասի պատմությունը):

Այն բաղկացած է առաջաբանից ու երկու մասերից (սահիֆե), որոնցից առաջինը ընդգրկում է շահ Աբբաս Ա-ի մինչև նրա զահակալությունն ընկած ժամանակաշրջանի պատմությունը, իսկ երկրորդը՝ նրա թագավորության պատմությունը երկու փուլերով՝ նախ առաջին երեսուն տարիների ժամանակահատվածը (I մադսադ), ապա՝ հետագա տարիներինը մինչև նրա մահը (II մադսադ)<sup>51</sup>: Մյուս պատմագիրների համեմատությամբ Իսքան-

<sup>49</sup> И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 31:

<sup>50</sup> Шараф-хан Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. I, II, Москва, Наука, 1967, 1976.

<sup>51</sup> Մատենադարանում պահվում են այս երկի տարբեր մասերի 4 ձեռագրեր (ՄՄ, արաբատառ ֆոնդ, ձեռ. 2, 11, 34, 575):

դար Մունշին բավականին ընդարձակ տեղ է հատկացնում Հարավային Կովկասում զարգացող դեպքերի նկարագրությանը, մանրամասն խոսում ոչ միայն տարածքի, այլև տեղի բնակչության, մասնավորապես հայերի մասին: Հեղինակը բավականին օբյեկտիվ է դեպքերի լուսաբանման հարցում և իր հաղորդումներով հաստատում է հայկական աղբյուրների տվյալները հայության բռնագաղթի մասին<sup>52</sup>: Արժեքավոր են նրա տեղեկությունները նաև ջալալիների ապստամբության, հատկապես Հարավային Կովկասում նրա տարածման մասին<sup>53</sup>:

Դեռ հեղինակի կենդանության օրոք նրա «պատմությունն» այնպիսի մեծ ժողովրդականություն է վայելում, որ Մունշին պաշտոնական առաջարկ է ստանում շարունակելու այն՝ ընդգրկելով շահ Սեֆի Ա-ի ժամանակաշրջանը: Մունշին սկսում է այն, բայց աշխատանքն ընդհատվում է հեղինակի մահով: Այս շարունակությունը հայտնի է մի ձեռագրով, որը վերնագրված է «Խոլասաթ ալ-սիյար» և իր մեջ ներառում է նաև Մուհամմեդ Մա'սում իբն Խոջադի Իսֆահանիի ընդգծված ներբողական բնույթ կրող կարճ ակնարկը նվիրված Գանձակի ու Ղարաբաղի բեկլարբեկեր Զիյադոլլիներին<sup>54</sup>:

Շահ Աբբաս Ա-ի ժամանակաշրջանի պատմությանն է նվիրված նաև Ֆազլի Բեկ Իսֆահանիի «Աֆգալ ալ-թավարիխ» (Տարեգրություններից լավագույնը) վերնագիրը կրող աշխատությունը՝ բաղկացած երեք հատորներից: Առաջին հատորն ընդգր-

<sup>52</sup> اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، بکوشش ایرج افشار، جلد 1، 2، قم 1335.

<sup>53</sup> И.П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 35:

<sup>54</sup> اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، بکوشش ایرج افشار، جلد 1، 2، قم 1335، صص. 668-669.

կում է Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի ժամանակաշրջանի պատմությունը, երկրորդը՝ շահ Թահմասպ Ա-ի, շահ Իսմայիլ Բ-ի ու Մուհամմեդ Խուդաբանդեի ժամանակաշրջանինը, երրորդը՝ շահ Աբբաս Ա-ինը: Հատորներից յուրաքանչյուրը պահպանվել է եզակի ձեռագրային օրինակով, որոնցից առաջինը պահվում է Քեմբրիջի գրադարանում (Էթոն-Պոտի հավաքածու, ձեռ. 278), երկրորդ հատորի առաջին մասը, որը հեղինակի ինքնագիր օրինակն է՝ Բրիտանական գրադարանում (ձեռ. 4678), երկրորդ մասը համարվում է կորած, իսկ աշխատության երրորդ հատորը վերը նշված Քրիստ քոլեջի նորահայտ և միակ ձեռագիրն է (h. Dd 5.6), որը հայտնաբերվել է 1993 թ. իրանագետ Չարլզ Մելվիլի կողմից: Այս երրորդ հատորի պարսկերեն բնագիրը հրատարակվել է 2015 թ. Քայումարս Քերեքլուի ընթերցմամբ ու Չ. Մելվիլի խմբագրությամբ<sup>55</sup>:

Ծագումով հայտնի ազնվականական տոհմից սերած Ֆազլի Բեկ Իսֆահանին իր պաշտոնական առաջխաղացում սկսել է 16 տարեկանում՝ եղբոր՝ Գանձակի վեզիր Մուհամմեդ Բեկի վարչական անձնակազմում: Երկուսը այնուհետև սեղափոխվում են Բարդա՝ որը կառավարում էր Իզիրմիդդրտի կառավարիչ Փեյքար խանը: 1617 թ. շահ Աբբաս Ա-ի հրամանով նա նշանակվում է Փեյքար խանի վեզիր, որի հիմնական պարտականությունն էր նախ Ղարաբաղի, ապա՝ Արևելյան Վրաստանի հարկատվությունը<sup>56</sup>: Ֆազլի բեկի պատասխանատվության տակ էր Ղարաբաղի, Մուղանաթի, Թուման-ե Մեշքինի, Ղափանաթի

<sup>55</sup> Fazli Beg Khuzani Isfahani, *A Chronicle of the Reign of Shah 'Abbas*, vol. I, II, Gibb Memorial Trust, 2015.

<sup>56</sup> Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ xxi:

ու Չուխուր-Սաադի ցեղերից չոբանբեգի հարկի գանձումը: Նա միաժամանակ նաև Ղարաբաղի ու Ատրպատականի հյուսիսսային շրջանների պետական (խալիսե) հողերի ֆինանսական վերահսկիչն էր: Ֆազլի Բեկի ուղևորությունները Ղարաբաղի, Ատրպատականի ու Արևելյան Վրաստանի տարածքներում լույս են սփռում իրանական տիրապետության ու վարչարարության մեթոդների ու մանրամասների վրա: Այս սկզբնաղբյուրը ի տարբերություն պարսկական մյուս պատմագրական երկերի ավելի մանրամասն ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում շահ Աբբաս Ա-ի ու հայ մելիքների փոխհարաբերությունների, ինչպես նաև Արևելյան Հայաստանի տարածքում զարգացող դեպքերի ու տնտեսական հարցերի շուրջ:

Սեֆյան շահ Սեֆի Ա-ի իշխանության շրջանն (1629-1642 թթ.) է ընդգրկում Աբու ալ-Մոֆախեր բ. Ֆազլալլահ ալ-Հուսեյնի Թաֆրեշիի «Թարիխ-ե շահ Սեֆի» (Շահ Սեֆիի պատմությունը) պատմագրական երկը: Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններից հայտնի է միայն, որ նա շահ Աբբաս Ա-ի ու Սեֆի Ա-ի ժամանակաշրջանի բանաստեղծ - պատմագիրներից էր և իր «պատմությունն» ավարտել է 1667 թ.<sup>57</sup>:

Շահ Աբբաս Բ-ի ժամանակաշրջանի կարևոր աղբյուրներից է Մուհամմեդ Թահիր Վահիդի «Թարիխ-ե շահ Աբբաս-ե Սանի» (Շահ Աբբաս Բ-ի պատմություն) կամ «Աբբաս-նամե» կոչված աշխատությունը<sup>58</sup>: Արժեքավոր են այս աղբյուրի վկայությունները հարկազանձումների ընթացքում չարաշահումները սահմա-

<sup>57</sup> تفرشی (ابوالمفاخر بن فضل الله الحسيني سوانح نگار نفرشی، مقدمه، تصحيح و تعليقات محسن بهرام نژاد، تهران: میراث مکتوب، 1388، ص. 21، 23.

<sup>58</sup> عباسنامه تالیف آقای ابراهیم دهکان، بهمت آقای رای رییس زاده، تهران، 1329.

նափակելու նպատակով շահ Աբբաս Բ-ի ձեռնարկած միջոցառումների մասին<sup>59</sup>:

Սեֆյան ժամանակաշրջանի պարսկերեն միակ պատմա-աշխարհագրական երկը «Մոխթասար-ե մոֆիդ» (օգտակար համառոտագրություն) վերնագրով հայտնի աշխատությունն է՝ գրված Մուհամմեդ Մոֆիդ Մուսթովֆի Բաֆեդիի կողմից: Հեղինակը եղել է Սեֆյան Իրանի վարչական ապարատի պաշտոնյաներից, որոշ ժամանակ (1077-1081) զբաղվել է Եզդի վակֆերի հաշվապահությամբ, որից հետո հեռացել է Հնդկաստան: Այստեղ էլ, Լահորում 1091 թ. ավարտում է վերը նշված երկը<sup>60</sup>, որտեղ նկարագրվում են Իրանի բոլոր վիլայեթները: Իր աշխատությունը գրելիս հեղինակը օգտվել է Համդալլահ Ղազվինիի «Նուզհաթ ալ-դուլուբից» և մեծապես ազդվել նրանից: Աշխատության մեջ նկարագրվում են Սեֆյան Իրանի կազմի մեջ մտնող Այսրկովկասյան շրջաններն ու բնակավայրերը<sup>61</sup>:

Նադիրյան ժամանակաշրջանն իր արտացոլումն է գտել երկու պալատական պատմագիրների՝ Միրզա Մեհդի Խան Ասթարաբադիի և Մուհամմեդ Քյազիմի գործերում:

Միրզա Մեհդի խանը եղել է Նադիր շահի քարտուղարն ու պալատական պատմագիրը, մասնակցել Աստվածաշնչի պարսկերեն թարգմանությանը, գրել ուզբեկերեն-պարսկերեն «Մանգլախ» կոչված բառարանը: Նրա պատմագրական երկերն են «Թա-

<sup>59</sup> И.П. Петрушевский, նշվ. աշխ., 38:

<sup>60</sup> مختصر مفید (جغرافیای ایرانزمین در عصر صفوی، بکوشش ایرج افشار، تهران: بنیاد موقوفات دکتر محمود افشار، 1390، ص. 2

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 163-173:

րիխ-ե Նադիրի» (Նադիրի պատմություն)<sup>62</sup> և «Դորրե-ե Նադերե» (Հազվագյուտ գոհար) աշխատությունը, որը հայտնի է բազմաթիվ ձեռագրերով<sup>63</sup> և շուրջ 11 վիմատիպ հրատարակություններով: Այս երկու աշխատություններն աչքի են ընկնում իրենց նրբագեղ համարվող խիստ ծանր ու դժվարըմբռնելի ներբողական ոճով: Այն Հարավային Կովկասի ժողովուրդների պատմության այս շրջանի կարևոր աղբյուրներից է<sup>64</sup>:

Նադիրի ժամանակաշրջանի բարձրարժեք սկզբնաղբյուրներից է Մուհամմեդ Քյազիմի ծավալուն «Թարիխ-ե ալամ առա-ե Նադիրի» (Նադիրի աշխարհակալության պատմությունը)<sup>65</sup> երկը: Այս հիմնարար աշխատությունը առատ նյութ է մատակարարում ժամանակաշրջանի Իրանի ու նաև Հարավային Կովկասի թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական պատմության համար, որը բարձր է գնահատվել ուսումնասիրողների կողմից<sup>66</sup>:

Նադիր շահին հաջորդած 35 տարիների ու Ջենյան թագավորական տան պատմությունն է շարադրված Աբու ալ-Հասան Բ.

---

<sup>62</sup> Միրզա Մեհդի Խանի այս աշխատությունը հայտնի է նաև հետևյալ վերնագրով՝ «Թարիխ-ե Ջահնգոշա-ե Նադերի» (Նադիրի աշխարհակալության պատմությունը):

<sup>63</sup> Մատենադարանում պահվում են «Թարիխ-ե Նադերի» և «Դորրե-ե Նադերի» աշխատությունների հինգական ձեռագիր ընդօրինակություն (ՄՄ, արաբատառ ֆոնդ, ձեռ. 23, 33, 293, 567, 590 և 7, 16, 86, 1198):

<sup>64</sup> Այս աշխատության նոր հրատարակություններից է՝ میرزا مهدی خان آسترابادی، تاریخ جهانگشای نادری، تهران، 1377.

<sup>65</sup> Այս աշխատությունը Մ. Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտում պահվող միակ ձեռագրի ֆոտոպատճենման եղանակով հրատարակվել է (Мухаммед Казим, Наме-йи аламара-йи Надири, т. I, II, III, Москва 1960, 1965, 1966).

<sup>66</sup> И.П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 41:

Մուհամմեդ Ամին Գուլեսթանեի «Մուջմալ ալ-թավարիխ» (Տարեգրությունների համառոտագրություն) վերնագրով հայտնի պատմագրության մեջ: Այն գրվել է 1780-1781 թթ.<sup>67</sup>:

Ղաջարական շրջանի պատմագիրներից է «Ասաֆ» գրական ծածկանունով և «Ռոսթամ ալ-Հոքամա» տիտղոսով հայտնի Մուհամմեդ Հաշեմը՝ ծնված 1732/3 թ.: Նրա «Ռոսթամ ալ-թավարիխ» (Ռոսթամի տարեգրություն) վերնագիրը կրող պատմագրական աշխատությունն ընդգրկում է Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնից մինչև Ֆաթհալի շահն ընկած ժամանակաշրջանի Իրանի պատմությունը<sup>68</sup>:

Մուհամմեդ Սադեդ Մուսնին (մահ. 1789/90թ.) գրում է Քերիմ Խան Ջենդի ժամանակաշրջանի պատմությունը՝ վերնագրված «Թարիխ-ե գիթի գոշայ» (Տիեզերակալության պատմություն) կամ «Թարիխ-ե Ջենդիյե» (Ջենդյան պատմություն): Նրա մահից հետո այս «պատմությունը» շարունակում են Միրզա Արդալ-Քերիմը և Աղա Մուհամմեդ Ռեզա Շիրազին<sup>69</sup>:

Մուհամմեդ Ֆաթհալլահ բ. Մուհամմեդ Թադի Սարավին եղել է Աղա Մուհամմեդ շահի ժամանակաշրջանի բանաստեղծներից ու նրա պալատական պատմագիրը: 1785-1786 թթ. Սարավին սկսում է գրել Աղա Մուհամմեդ շահ Ղաջարին նվիրված «Թարիխ-ե Մուհամմեդի» (Մուհամմեդի պատմությունը) պատմագրական երկը<sup>70</sup>: Այն ընդգրկում է Ջենդյան արքայատոհ-

<sup>67</sup> ابو الحسن بن محمد امين گلستانه، مجمل التواريخ، بسعی و اهتمام محمد تقی مدرسى رضوى، تهران: موسسه انتشارات دانشگاه تهران، 1391، ص. 18.

<sup>68</sup> محمد هاشم آصف، رستم التواريخ، تصحيح دكتور ميترأ مهرايادی، تهران: دنياى كتاب، 1382.

<sup>69</sup> И.П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 43:

<sup>70</sup> محمد فتح الله بن محمد تقی ساروی تاریخ محمدی "احسن التواريخ"، تهران 1371.

մի վերջին 18 տարիների և հետագա մինչև Աղա Մուհամմեդ շահ Ղաջարի մահն ընկած ժամանակաշրջանի (1761-1797թթ.) պատմությունը: Այս երկը գրված է պարսկալեզու պալատական պատմագրությանը բնորոշ ներբողական ու ածականներով խճողված, խրթին ոճով: Չնայած դրան, այն իր ժամանակաշրջանի արժեքավոր սկզբնաղբյուրն է, որտեղ գտնում ենք նաև հայ ժողովրդի պատմությանը վերաբերող կարևոր անդրադարձներ կապված Աղա Մուհամմեդ Խանի կողմից XVIII դարի 90-ական թթ. Ղարաբաղը հպատակեցնելու նպատակով ձեռնարկված քայլերի հետ:

Ղաջարական ժամանակաշրջանի պատմագիրներից է քրդական դուներուլի ցեղի առաջնորդի տոհմից սերած Աբդ ալ-Ռազզադ իբն Նաջաֆ Ղուլի Դուներուլին (1762/3-1827/8թթ.): Նա գրել է Ղաջարական դինաստիայի առաջին երկու գահակալների պատմությունը մինչև 1825թ.՝ վերնագրելով այն «Մա'ասեր-ե սուլթանիե» (Սուլթանական հուշարձաններ)<sup>71</sup>: Այն ինչպես Իրանի, այնպես էլ Հարավային Կովկասի XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է:

Նասրեդդին շահի օրոք հիմնված «Դառ ալ-ֆոնունի»՝ առաջին բարձրագույն դպրոցի հետ են կապվում իրանական պատմագրության ու աշխարհագրագիտության խոշոր ներկայացուցիչներ Ռեզա Ղուլի Խան Հեդայաթի ու Սանի ալ-Դաուլայի գործունեությունը:

Ռեզա Ղուլի Խան Հեդայաթը (1800-1870) «Դառ ալ-ֆոնունի» առաջին տնօրենն էր: Նա հեղինակել է ստվարածավալ ընդհանուր պատմություն սկսած հնագույն ժամանակներից մինչև

<sup>71</sup> عبد الرزاق مفتون دنلی، مآثر سلزانیه، تهران، 1351.

1857թ. վերնագրելով այն «Ռոուզաթ ալ-սաֆա-յե Նասերի» (Նասերի մաքրության այգին), որտեղ սկզբնաղբյուրի արժեք ունի միայն XIX դարի առաջին կեսն ընդգրկող մասը<sup>72</sup>:

Իրանում պատմաաշխարհագրական գրականության զարգացման մեջ մեծ դեր է կատարում Մուհամմեդ Հասան Խանի, կամ ինչպես ավելի շատ նա հայտնի է՝ Սանի ալ-Դաուլայի (մահ. 1896թ.) գործունեությունը: Նա եղել է «Դառ ալ-ֆոնունի» առաջին շրջանավարտներից, ուղեկցել է Նասրեդդին շահին նրա խորասանյան ու եվրոպական ճանապարհորդություններում: Նրա հեղինակած աշխատությունների մեջ իրենց կարևորությամբ առանձնանում են «Միրաթ ալ-բուլղանը» (Աշխարհի հայելի), որն իրենից ներկայացնում է ընդարձակ աշխարհագրական բառարանը և նրա շարունակությունը հանդիսացող եռահատոր «Մաթլա ալ-շամս» (Արեգակի ծագումը) հիմնարար աշխատությունը, որի առաջին հատորը նվիրված է Խորասանին և ամփոփում է հեղինակի Խորասանյան ճանապարհորդության տվյալները:

Միրզա Մուհամմեդ Թադի Մուսթովֆին, որն ավելի շատ հայտնի է Լիսան ալ-Մուլք Մեփեհրի անվամբ (ծնվ. 1801/2թ.) ստացած լինելով իր ժամանակի համար լիարժեք կրթություն, ծառայել է Ղաջարական հարստության Ֆաթհալի, Մուհամմեդ ու Նասրեդդին շահերի պալատներում: Իր ստվարածավալ «Նասեխ ալ-թավարիխ» (Տարեգրություններ ընդօրինակող) պատմագրական երկը ավարտել է 1857/8թ.: Նրա երեք հատորներից

<sup>72</sup> رضا قليخان متخلص بهدايت، روضة الصفاى ناصرى، جلد ۹، ۱۰، قم، ۱۳۳۹.

յուրաքանչյուրը նվիրված է վերոհիշյալ երեք Ղաջար շահերից մեկի ժամանակաշրջանին:

XIX դարի կեսերից պատմագրության վերելք է նկատվում Ռուսաստանի տիրապետության տակ անցած Հարավային Կովկասում<sup>73</sup>: Դրան նպաստում է ռուս բարձրաստիճան պաշտոնյաների ցուցաբերած հետաքրքրությունը իրենց ենթակա տարածքների պատմական անցյալի նկատմամբ, որի իմացությունը կօգներ նրանց տարածաշրջանում կառավարման ձևերի ընտրության հարցում: Պատմագրական երկերի մի մասը գրվել են հենց Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների պատվերով: Ռուսական բանակի սպա Աբբաս Ղուլի աղա Բակիխանովը 1841 թ. պարսկերեն գրում է «Գյուլխթան-ե Իրան» (Դրախտային ծաղկանոց) վերնագրով պատմագրական աշխատություն նվիրված Արևելյան Այսրկովկասի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև Գյուլխտանի հաշտությունը 1813 թ.: Այն 1844 թ. ներկայացվում է Վրացահմերթական նահանգի նահանգապետին<sup>74</sup>: Իր պատմությունը գրելիս հեղինակն օգտվել է տարալեզու՝ պարսկերեն, վրացերեն, հայերեն, հունարեն և թուրքերեն աղբյուրներից: Աշխատությունը բաղկացած է 5 գլուխներից, որոնք շարադրված են պարսկական պատմագրության ավանդույթներին համապատասխան՝ սկսելով Աստվածաշնչյան պատմություններով և նախախլամական շրջանի Իրանի թագավորների պատմությամբ: Միայն վերջին 5-

<sup>73</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, «Զանգակ 97», 2000, էջ 11-12:

<sup>74</sup> А. Бакиханов, Сочинения. Записки. Письма, Баку, 1983, с. 320.

րդ գլուխն է ընդգրկում Նադիր շահի մահվանը հաջորդող 60 տարիներին Արևելյան Այսրկովկասում ստեղծված խանություններում զարգացող իրադարձությունների նկարագրությանը: Այս աշխատությունն առաջին անգամ ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է 1926 թ., ապա նաև 1991 թ.<sup>75</sup>:

Ղարաբաղի խանության պատմությանն է նվիրված 1797-1822 թթ. Իբրահիմ խանի վեզիր, ապա այնտեղի գավառական դատարանում ծառայող Միրզա Ջամալ Ջևանշիր Ղարաբաղիի «Թարիխ-ե Ղարաբաղ» պարսկերեն պատմագրական աշխատությունը՝ գրված Շահամիր Խան Բեգյարովի պատվերով<sup>76</sup>:

Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ կարևոր տեղ է գրավում հայազգի Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» (ճշմարտացի պատմություն) պարսկերեն պատմագրական երկը<sup>77</sup>, որը գրվել է XIX դարի կեսին Գ. Օրբելիանու պատվերով<sup>78</sup>: Այն Ղարաբաղի հայ մելիքությունների ու XIX դարի սկզբի ռուս-իրանական պատերազմների արժեքավոր սկզբնաղբյուրներից է:

XXI դարի սկզբին Կովկասյան պատմագրության նմուշներից շատերը, կապված Խորհրդային Միության փլուզման ու տարածաշրջանում Իրանի դերի մեծացման հետ, դարձան

<sup>75</sup> А. Бакиханов, Гюлистан-е Ирам, Баку, 1926. А. Бакиханов, Гюлистан-е Ирам, ред., комм. и примеч. З. Буниязова, Баку, изд. Элм, 1991.

<sup>76</sup> Мирза Джамаль Джеваншир Карабаги, История Карабага, Баку, 1959, с. 61.

<sup>77</sup> «Թարիխ-ե Սաֆիի» միակ ձեռագիրը գտնվում է Վրաստանի ԳԱ Արևելյան Ձեռագրերի ինստիտուտի Արևելյան բաժնում (P- 195): Այդ աշխատության վերջին երկու գլուխները հրատարակվել են հայերեն թարգմանությամբ և գիտական մեկնաբանություններով (Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, «Զանգակ 97», 2000):

<sup>78</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. աշխ., էջ 35:

իրանցի հետազոտողների ուսումնասիրության առարկան և վերահրատարակվեցին: Այդ աշխատությունների շարքում են Միրզա Ջամալ Ջևանշիրի<sup>79</sup> և Միրզա Յուսուֆ Ներսեսուվի վերոհիշյալ երկերը<sup>80</sup>: Իրանցի հետազոտողների ջանքերով վերջին շրջանում հրատարակվեցին նաև մինչ այդ անտիպ մի քանի այլ մանր աշխատություններ նվիրված Արցախի պատմությանը, որոնք են Միրզա Ջամալ Ջևանշիրի որդի Ռեզա Ղուլի Բեկի կողմից Ղարաբաղի Փանահ ու Իբրահիմ Խաների կառավարման նվիրված աշխատությունն ու վերջինիս դստեր՝ Գոհար Աղայի «Վակֆնամեն»<sup>81</sup>:

## Ք. Կոստիկյան

Խորին շնորհակալություն ենք հայտնում Գեղամ Բադալյանին ստորև թարգմանաբար ներկայացվող «Թագքիրաթ ալ-մուլուքի» բնագրի որոշ տեղանունների ճշգրտման հարցում ցուցաբերած օգնության համար:

## Ք. Կոստիկյան, Ծ. Մեշքանբարյանս

---

<sup>79</sup> میرزا جمال جوانشیر قره باغی، مقدمه، تصحیح و تحشیه از حسین احمدی، تهران: مرکز اسناد و خدمات پژوهشی، 1382.

<sup>80</sup> میرزا یوسف قراباغی، تاریخ صافی (تاریخ قراباغ از ابتدا تا دوره دوم جنگهای روس و ایران، بکوشش حسین احمدی، تهران: موسسه مطالعات تاریخ معاصر ایران، 1390.

<sup>81</sup> رضا قلی بیگ، حکومت پناه خان و ابراهیم خان در ولایت قره باغ، وقفنامه گوهر آغا (دختر ابراهیم خلیل جوانشیر)، سه رساله در باره قفقاز، مقدمه، تصحیح و یادداشتها حسین احمدی، تهران: موسسه مطالعات تاریخ معاصر ایران، 1384.